Հաճախակի Տրվող Հարցեր

1. Ե՞րբ և ինչպե՞ս պետք է տեղեկացնեմ Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջության Վարչությանը (DPH):

- Տեղեկացրեք, եթե դուք հայտնաբերում եք 1 կամ ավելի **լաբորատորիայում հաստատված COVID-19 դեպքեր** (հաստատված դրական դեպք), որոնք հիվանդության սկզբից 14 օրվա ընթացքում որևէ պահի գտնվել են երեխաների խնամքի տանը (հիվանդության սկզբի ամսաթիվը COVID-19 ախտանիշների առաջին օրն է կամ COVID-19-ի թեստավորման ամսաթիվը, որը որ ավելի վաղ է եղել): Վարակված անձը կարող է լինել անձնակազմի անդամ, երեխա, ձեր տան անդամ կամ ձեր տեղամասի այցելու:
- Անվտանգ առցանց զեկույցը Հանրային Առողջության Վարչությանը (DPH) COVID-19-ի հետ շփման մասին տեղեկացնելու լավագույն միջոցն է: Դա կարելի է անել համակարգչով կամ հեռախոսով, որը հասանելիություն ունի ապահով վեբ հավելվածին: Դուք կարող եք ներբեռնել հավելվածը՝ այցելելով http://www.redcap.link/lacdph.educationsector.covidreport:
- Եթե չեք կարող օգտվել հավելվածից, ներբեռնեք և լրացրեք COVID-19-ով Վարակվածների և Եվ Նրանց Հետ Շփվածների Տվյալների Ցանկը Կրթական Ոլորտի համար և ուղարկեք այն ACDC-Education@ph.lacounty.gov: Կարդացեք այս փաստաթղթի վերջում գտնվող գաղտնաբառի պաշտպանության հրահանգները, որպեսզի իմանաք, թե ինչպես պաշտպանել փաստաթուղթը նախքան այն էլեկտրոնային փոստով ուղարկելը:
- Եթե համակարգչով և/կամ ինտերնետով DPH-ին տեղեկացնելը դժվար է, խնդրում ենք զանգահարել 888-397-3993 հեռախոսահամարով:
- Դեպքի մասին բոլոր ծանուցումները պետք է ներկայացվեն դեմքի մասին ձեզ ծանուցելուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում:
- Եթե վարակի հետ շփման մասին հարցեր ունեք կամ կարծում եք, որ տվյալների ցանկը լրացնելու համար 1 աշխատանքային օրից ավել ժամանակի կարիք կունենաք, կարող եք էլեկտրոնային նամակ ուղարկել ACDC-Education@ph.lacounty.gov հասցեին՝ երկարացում պահանջելու նպատակով: Դուք ՊԵՏՔ Է հնարավորինս շտապ լրացնեք և հանձնեք Հիվանդի և Նրա Հետ Շփվածների (Կոնտակտների) Տվյալների Ցանկը:
- Եթե 14-օրյա ժամկետում ունեք COVID-19-ի հաստատված 3 կամ ավելի դեպք, ապա ձեզանից պահանջվում է **անհապաղ** այդ մասին հաղորդել՝ հետևելով վերը նշված զեկուցման քայլերին:

2. Ինչպե՞ս ես կարող եմ իմանալ՝ արդյոք իմ երեխաների խնամքի ընտանեկան տանը վարակի հետ շփում է եղել:

Եթե վարակված անձը **ԵՂԵԼ Է** (որևէ մեկը դրական արդյունքով COVID-19-ի թեստ ունի, կամ որևէ մեկը ստացել է COVID-19-ի ախտորոշում իր բժշկական մատակարարի կողմից) երեխաների խնամքի ընտանեկան տանը իր ***վարակիչ շրջանում***, ապա ձեր հաստատությունում վարակի հետ շփում է եղել:

- Վարակիչ շրջանը (ժամանակահատված, երբ հիվանդը կարող է վարակել մյուսներին) սահմանվում է որպես ցանկացած պահ սկսած ախտանիշների ի հայտ գալուն նախորդող երկրորդ օրվանից մինչև ախտանիշների ի հայտ գալուց հետո առնվազն 10-րդ օր ԵՎ երբ ջերմություն չեն ունեցել առնվազն 24 ժամ (առանց ջերմիջեցնող դեղորայքի օգտագործման) ԵՎ երբ ախտանիշները բարելավվել են:
- Եթե վարակված անձը ախտանիշներ չի ունեցել, վարակիչ շրջանը համարվում է նրանց թեստավորմանը նախորդող երկրորդ օրվանից մինչև դրանից հետո 10-րդ օրը:

Եթե իր վարակիչ շրջանում անհատը **ՉԻ եղել** երեխաների խնամքի տանը, ապա երեխաների խնամքի տանը չի եղել վարակի հետ շփում: Այնուամենայնիվ, ինչպես վերը նշվեց, երեխաների խնամքի տունը դեռևս պարտավոր է հաղորդել հաստատված դեպքերի մասին, եթե վարակված անձը հիվանդության սկզբին նախորդող 14 օրերի ընթացքում որևէ ժամանակ եղել է տարածքում, նույնիսկ եթե երեխաների խնամքի հաստատության տերը որոշում է, որ վարակի հետ շփում տեղի չի ունեցել:

3. Ինչպե՞ս իմանամ, թե ում համարեմ COVID-19-ով հիվանդի հետ սերտ շփում ունեցած անձ (կոնտակտ):

Մարդը համարվում է սերտ շփում ունեցած անձ*, եթե նա հետևյալ տարբերակներից մեկով շփվել է COVID-19-ով ախտորոշված անձի հետ, երբ վերջինս եղել է վարակիչ շրջանում.

- COVID-19-ով վարակված անձից մինչև 6 ոտնաչափ հեռավորության վրա են գտնվել ընդհանուր առմամբ 15 րոպե կամ ավելի՝ 24 ժամվա ընթացքում, **ԿԱՄ**
- Չպաշտպանված շփում են ունեցել COVID-19-ով վարակված անձի մարմնի հեղուկների և/կամ արտազատուքի հետ: Օրինակ՝ նրանց վրա հազացել կամ փռշտացել են, կամ համատեղ բաժակ կամ ուտելու սպասք են օգտագործել, կամ խնամել է վարակված անձին՝ առանց պատշաճ պաշտպանիչ հանդերձանք կրելու:

Եթե սերտ շփում ունեցած անձը ամբողջովին պատվաստված է և չունի ախտանիշներ, ապա նա կարանտին պահպանելու կարիք չունի: Եթե սերտ շփում ունեցած անձը ամբողջովին պատվաստված չի եղել, նա պետք է հետևի կարանտինի հրահանգներին:

* Կրթական վայրերում COVID-19-ի ուղեցույցը ընդլայնվում է: Կանոնավոր կերպով ստուգեք Վարակի Հետ Շփման Կառավարման Ծրագիրը Վաղ Խնամքի և Կրթական Հաստատություններում՝ կրթական վայրերում վարակակրի հետ սերտ շփում ունեցած անձանց՝ կոնտակտավորների ամենաթարմ սահմանմանը ծանոթանալու համար:

4. Ե՞րբ է անձը համարվում ամբողջովին պատվաստված:

Անձը համարվում է COVID-19-ի դեմ ամբողջովին պատվաստված հետևյալներից 2 շաբաթ անց.

- Անձը ստացել է COVID-19-ի դեմ Johnson & Johnson (J&J)/Janssen պատվաստանյութի մեկ դեղաչափը, կամ

- Անձը ստացել է COVID-19-ի դեմ Pfizer կամ Moderna պատվաստանյութերի երկրորդ դեղաչափը, կամ
- Անձն ավարտել է COVID-19-ի դեմ այն պատվաստանյութի շարքը, որն Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության կողմից ընդգրկվել է արտակարգ իրավիճակներում օգտագործման ցուցակում (օրինակ՝ AstraZeneca/Oxford և Sinopharm):

Եթե անձի երկրորդ կամ մեկ (միակ) դեղաչափի ներարկումից անցել է 2 շաբաթից քիչ ժամանակ, ապա նա չունի բավարար պաշտպանություն COVID-19 վիրուսից, որպեսզի ապահով կերպով դադարեցնի վիրուսի կանխարգելման որևէ քայլ:

Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս Երբ Ամբողջովին Պատվաստվել Եք կայքէջը, ներառյալ՝ լրացուցիչ հորդորներ թույլ իմունային համակարգ ունեցող անձանց համար:

5. Ի՞նչ պետք է կատարվի, եթե երեխայի խնամքի իմ ընտանեկան տանը վարակ կա:

- **Մեկուսացեք:** Հիվանդ(ներ)ը պետք է մեկուսանան, ինչպես նշվում է Հանրային Առողջության Վարչության (DPH) մեկուսացման հրահանգներում:
- **Կարանտին պահպանեք:** COVID-19-ով հիվանդ անձի հետ սերտ շփում ունեցած բոլոր մարդիկ պետք է անմիջապես հեռանան երեխաների խնամքի ընտանեկան տնից և հետևեն կարանտինի հրահանգներին: Պարբերաբար ստուգեք Վարակի Հետ Շփումների Կառավարման Ծրագիրը Նախադպրոցական Խնամքի և Կրթական Տեղամասերում կայքէջը՝ կրթական ոլորտում սերտ շփում ունեցածների՝ կոնտակտավորների ամենաթարմ նկարագրության համար:
- **Մաքրեք/ախտահանեք ձեր տունը, ինչպես նկարագրված է ստորև բերված Աղբյուր #5-ում:**
- **Զեկուցեք ինչպես նշվում է վերևում՝ Բաժին 1-ում:**
- **Եթե կա վարակի հետ շփված կամ վարակված անձ, որը երեխաների խնամքի տան բնակիչ է, ժամանակավորապես փակեք հաստատությունը:** Հաստատությունը պետք է փակ մնա, քանի դեռ որևէ մեկը, որն ապրում է երեխաների խնամքի տանը, գտնվում է մեկուսացման կամ կարանտինի ներքո: Հաստատությունը կարող է վերաբացվել միայն այն բանից հետո, երբ բոլորը, ովքեր ապրում են ընտանեկան երեխաների խնամքի տանը, կավարտեն պահանջվող մեկուսացման կամ կարանտինի ժամանակահատվածը: Բնակիչ չհանդիսացող անձնակազմը և երեխաները նույնպես պետք է ավարտեն իրենց անհատական մեկուսացումը կամ կարանտինը՝ նախքան տեղամաս վերադառնալը:

6. Ե՞րբ պետք է փակեմ իմ՝ երեխաների խնամքի ընտանեկան հաստատությունը:

Երեխաների խնամքի հաստատությունը պետք է փակվի հետևյալ բոլոր դեպքերում: Հաստատությունը պետք է փակ մնա, քանի դեռ որևէ մեկը, որն ապրում է երեխաների խնամքի տանը, գտնվում է մեկուսացման կամ կարանտինի ներքո: Բացի այդ, կիրառվում են 5-րդ

Բաժնում նշված բոլոր պահանջները:

- **Իրավիճակ #1:** Եթե հաստատված COVID-19-ով երեխան կամ անձնակազմի անդամը իր *վարակիչ շրջանում* եղել է ձեր խնամքի հաստատությունում, ինչպես նշված է վերևում, ապա հնարավոր է, որ նրանք վարակել են մյուսներին: Եթե երեխաների խնամքի մատակարարը չի կարողանում որոշել, թե որ երեխաներն ու աշխատողներ են եղել սերտ կապի մեջ, ապա բոլոր երեխաները և անձնակազմը պետք է հետևեն կարանտինի հրահանգներին:
- **Իրավիճակ #2:** Եթե մեկը, ով ապրում է ընտանեկան երեխաների խնամքի տանը, **թեստի դրական** արդյունք է ունենում, ընտանեկան երեխաների խնամքի տունը պետք է փակվի: Երեխայի խնամքի մատակարարը պետք է նաև որոշի, արդյոք որևէ մեկը սերտ կապի մեջ է եղել հիվանդի հետ և հանձնարարի նրանց կարանտին պահպանել: Եթե մատակարարը չի կարող բացառել երեխաների խնամքի կենտրոնում վարակման հնարավորությունը, բայց չի կարող հստակորեն ճանաչել նրանց, ովքեր սերտ կապի մեջ են եղել, ապա բոլոր երեխաները և աշխատակիցները պետք է կարանտին պահպանեն: Երեխայի խնամքի մատակարարը պարտավոր է այս դեպքի մասին զեկուցել DPH-ին, ինչպես նկարագրված է վերևում՝ Բաժին 1-ում:
- **Իրավիճակ #3.** Եթե որևէ մեկը, ով ապրում է ընտանեկան երեխաների խնամքի տանը, շփվել է վարակակրի հետ հաստատությունից դուրս (համարվում է սերտ կոնտակտավոր), և պարտավոր է կարանտին պահպանել, ինչպես նշվում է կարանտինի հրահանգներում, ապա տեղամասը պետք է ժամանակավորապես փակվի:

7. Ե՞րբ չպետք է փակեմ իմ՝ երեխաների խնամքի ընտանեկան հաստատությունը:

Հարկավոր չէ, որ դուք փակեք ձեր ընտանեկան երեխաների խնամքի հաստատությունը, եթե երեխան կամ անձնակազմի անդամը, **որը չի ապրում երեխաների խնամքի տանը**, շփվել է COVID-19-ի վարակակրի հետ երեխաների խնամքի տնից դուրս: Այս անձը համարվում է սերտ շփում ունեցած անձ և պետք է հետևի կարանտինային ցուցումներին, ներառյալ՝ չպետք է հաճախի երեխաների խնամքի ձեր հաստատություն: Այնուամենայնիվ, եթե վարակված երեխայի կամ անձնակազմի կարանտինային շրջանում թեստի արդյունքը դրական է, **և** վարակիչ շրջանում նրանք գտնվել են ձեր՝ երեխաների խնամքի տանը, ապա հետևեք 6-րդ Բաժնի Իրավիճակ #1-ին և 5-րդ Բաժնի բոլոր քայլերին:

Դուք նաև ստիպված չեք լինի փակել ձեր տեղամասը, եթե տան **բոլոր** վարակված անդամները և/կամ աշխատակիցները լիովին պատվաստված են, ինչպես սահմանված է 4-րդ Բաժնում:

Ուղեցուցային փաստաթղթեր, աղբյուրներ և արձանագրություններ, որոնք անհրաժեշտ է կարդալ և հետևել.

1. Նախադպրոցական Խնամքի և Կրթության COVID-19 Գործիքակազմ: Սա Նախադպրոցական Խնամքի և Կրթության Հաստատությունների (ECE) համար հիմանական էջն է: Այն պարունակում է ձեր ոլորտի բոլոր համապատասխան աղբյուրները, այդ թվում՝

ուսուցողական տեսանյութ, թե ինչպես հանձնել առցանց զեկույց, և տեսանյութ, թե ինչպես լրացնել վարակակրի և նրա հետ շփվածների տվյալների ցուցակը excel տարբերակում: Ստորև բերված են հիմնական փաստաթղթերի հղումներ, որոնք կարող եք մուտք գործել այս գործիքակազմից:

2. Նախադպրոցական Կրթության Ուղեցույցի Փաստաթուղթ: Պահանջների և լավագույն գործողությունների ամփոփագիր ECE մատակարարների համար՝ ուժեղացնելու անվտանգությունը և նվազեցնելու COVID-19-ի փոխանցման վտանգը ECE-ի հաստատություններում:
3. Նախադպրոցական Խնամքի և Կրթության՝ Վարակի Հետ Շփումների Կառավարման Ծրագիր: Այս փաստաթուղթը ձեզ ուղղորդում է անհրաժեշտ և առաջարկվող քայլեր ձեռնարկելու, երբ ձեր երեխաների խնամքի հաստատությունում հաստատված COVID-19 դեպք ունեք:
4. Ուսումնական Հաստատություններում Երեխաների և Աշխատակիցների Վարակման և Ստուգման Որոշումների Ուղիներ: Այս փաստաթուղթը քայլ առքայլ նշում է այն ամենը, ինչ դուք պետք է անեք, եթե երեխայի/աշխատողի ստուգման արդյունքը դրական է:
5. Տան Մաքրումը
6. Խորհուրդ է տրվում, որ յուրաքանչյուր ոք, ով COVID-19-ի թեստավորման կարիք ունի, կապվի իր հիմնական բուժաշխատողի հետ: Եթե այսպիսի տարբերակ չկա, այցելեք https://corona-virus.la/covid-19-testing՝ թեստավորման մասին տեղեկությունների և թեստավորման ժամադրություն նշանակելու համար:
7. COVID-19-ի դեմ պատվաստման վերաբերյալ տեղեկությունների և ժամադրություն նշանակելու համար խնդրում ենք այցելել VaccinateLACounty.com:

Կորոնավիրուսային նոր հիվանդության (COVID-19) մասին կամ Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողության Վարչության վերջին թարմացումների և COVID-19-ի հետ կապված Առողջության Պատասխանատուի Հրամանների վերաբերյալ ավելի շատ տեղեկություններ ստանալու համար խնդրում ենք այցելել DPH կայքը: Խնդրում ենք վարակի հետ շփումների կառավարման հետ կապված հարցերի դեպքում կապ հաստատել ACDC-Education@ph.lacounty.gov հասցեով:

Եթե ԱՆԿԱՐՈՂ ԵՔ ձեր զեկույցը ներկայացնել DPH-ին REDCap-ի միջոցով և մտադիր եք ձեր զեկույցը ներկայացնել Հիվանդների և Նրանց Հետ Շփված Անձանց (Կոնտակտներ) Տվյալների Ցուցակը Excel տարբերակով, Excel փաստաթուղթը պետք է գաղտնաբառով պաշտպանված լինի:
Հրահանգները հետևյալն են.

ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ԵՎ ԿՈՆՏԱԿՏՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՑԱՆԿԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԱԲԱՌ. ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

Հիվանդի և կոնտակտների տվյալների Excel ցուցակներում ներառված Առողջական Անձնական Տեղեկությունները (PHI) պաշտպանելու համար Excel-ի աշխատանքային գրքերը պետք է պաշտպանված լինեն գաղտնաբառով.

1. Windows-ում սեղմեք «Ֆայլ» (“File”) > «Տեղեկություն» (“Info”) ձախ կողմի ժապավենի վրա:
2. Սեղմեք «Պաշտպանեք աշխատանքային գրքույկը» (“Protect Workbook”), ապա՝ «Պաշտպանել գաղտնաբառով» (“Encrypt with Password”):
3. Մուտքագրեք ձեր գաղտնաբառը, սեղմեք OK և նորից մուտքագրեք այն: Պահպանեք ֆայլը:
4. Առանձին էլ-նամակով գաղտնաբառն ուղարկեք ACDC-education@ph.lacounty.gov հասցեին: Ուղարկեք Excel ֆայլը առանձին էլ. նամակով:
5. Mac-ի վրա սեղմեք «Ֆայլ» (“File”), ապա՝ «Գաղտնաբառեր» (“Passwords”):
6. Մուտքագրեք գաղտնաբառ «Գաղտնաբառը բացելու համար» դաշտում (“Password to Open”): Համոզվեք, որ «Միայն կարդալու համար առաջարկվողը» նշված չէ (“Read-only recommended”): ՍԵՂՄԵՔ OK: Կրկին մուտքագրեք գաղտնաբառը և սեղմեք OK: Պահպանեք ֆայլը:
7. Առանձին էլ-նամակով գաղտնաբառն ուղարկեք ACDC-education@ph.lacounty.gov հասցեին: Ուղարկեք Excel ֆայլը առանձին էլ. նամակով: